

Հաւատարիմ ծառայութեամբ աչքի էին ընկնում, իբրեւ պարգև էին տրուում:

Աւերջին ժամանակներս այլ ևս «Շանգ—Ֆանգ» չէր բաշխուում. այդ պատուաւոր սրի վերջին կրողը Մոնղոլիայի զօրապետ Սայ—շանգ—ախ—ն էր, որը թագաւորական տան մատուցած իր անձնուէր ծառայութեամբ և մանաւանդ ապստամբ Տայ պինգ—ներին զսպելով արժանացաւ կայսրի այդ շնորհին և միաժամանակ նշանակուեցաւ զօրքի ընդհանուր հրամանատար:

* *

Թղուկ ծառեր.—Արեւմտեան Ափրիկայում մօտ ժամանակներս մի անտառ է գտնուած, որի մակերևոյթը հազիւ միայն 6 քառակուսի հազարամետր տարածութիւն է բռնում: Այդ անտառի ծառերի բարձրութիւնը 30 սանտիմետրից (6 1/2 վերշոկ) աւելի չէ, այն ինչ նրանց հաստութիւնը երբեմն մինչև 3 մետրի (4 1/3 արշին) է հասնում: Նրանց տերևները շատ հաստ են ու լայն, իսկ կարմիր ծաղիկներն երկար փնջեր են կազմում ու կախ ընկնում: Այսպէս ուրեմն, նոյն իսկ Ափրիկայում ապրող թզուկ ժողովրդի հանգէպ, կարելի է, այս թզուկ ծառերի անտառը դնել, որով կենդանիների ու բոյսերի մէջ գոյութիւն ունեցող համեմատութեան աստիճանն աւելի կատարեալ է դառնում: Առհասարակ թզուկ ծառերը խիստ շատ են գնահատուում և մշակուում են յատկապէս 2ինաստանում և ճափոնիայում, որտեղ հազուադիւրս չեն այնպիսի ծառեր, որոնք թէև յիսուն տարուց աւելի է ինչ գոյութիւն ունին, բայց 30—40 հազարերորդ մետրից (5/4 վերշոկից մինչև մի վերշոկ) բարձր չեն:

Ինչ կարծիք, շատ ցանկալի կլինի իմանալ այն բնական պայմանները, որոնք նպաստում են այդպիսի շնչին մեծութեան ծառեր յառաջ գալուն:

* *

Վիրխարի մակնիդ.—Մի հնարագէտ ամերիկացի կարողացել է իւր ագարակում 5 ոտնաչափ երկարութեան և 230 գրուանքայ ծանրութեան ճակնդեղ ածնցնել: Ի հարկէ, այդպիսի հսկայական մեծութեան արմատը փափուկ ու քնքոյշ լինել չի կարող, ինչպէս սովորական փոքրիկ ճակնդեղն է: և ուրեմն կտրեւելու համար սղոց և կամ կացին հարկաւոր կլինի գործ դնել: Սակայն ամերիկացի պարոնը յայտարարել է, որ իւր ճակնդեղը այնու ամենայնիւ մեծ ծառայութիւն կարող է մատուցանել մարդկութեան. երբ երկրիս երեսից անյայտանալու լինին անտառները, այն ժամանակ գետնի տակը կարելի կլինի ճակնդեղի անտառներ ձգել:

* *

Աշխարհիս ամենամեծ աղամեղր.—„Das Neue Blatt“ թերթի խօսքերին նայելով, այժմս Լոնդոնում վաճառուում է այդ թանկագին քարը մի միլիոն ֆունտ ստերլինգով (6,300,000 ռ.), Այդ աղը «Նգէր—ֆաունտէն» է կոչուում և իւր մեծութեամբ գերազանցում է մինչև այժմս յայտնի եղած ագամանդներից, «Բեզէնա»ից, «Կոխինուր»ից, «Իմպերիալ»ից, «օրլով»ից և այլն:

«Նգէր—ֆաունտէն»-ը 273 կարատ (13 միլաւրից աւելի) է կշռում և ունի հիանալի կապոյտ գոյն, իսկ ձեռք նման է սառցի սլուլի: Երկարութիւնը 3, իսկ տրամագիծը՝ ամենալայն մասում՝ 2 մատնաչափ է:

Գտնել է Ափրիկայում: Օրանժի հասարակապետութեան մէջ, մի խափշիկ, որին հազար ֆունտ ստերլինգ փող է տրուել, բացի զանազան ընծաներից, որոնք զգալիտարար նրա հոգով և թէ մարմնով կորչելուն պատճառ դարձան:



ՅԱՆՎԱՐԻ ԵՐԵՎԱՆԻ 1899 թ. ՄԱՅԻՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ—ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

I.

ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳԱՐԱՆԻՉ

(Ը. դար).

Ա.

Խոսրովիկ Թարգմանիչը Ը. դարու սակաւթիւ և անտիպ մատենագիրներից մէկն է, մեր եկեղեցու պատմութեան և դաւանարանութեան կարեւոր մի յիշատակարան: Շատ ժամանակ չէ անցել նորա յայտնութեան օրից, որի առիթն եղաւ մեր շնորհունակ միարանակից Գալուստ Տ. Մկրտչեան: 1892 թ. «Արարատ»-ի Դ. համարի մէջ նա մի հատուած հրատարակեց «Արատասանութիւն Խոսրովիկ Թարգմանչի ի մենամարտին Դաւթի և Գողիթի» վերնագրով համարելով այն Ղազար Փարպեցու յիշած * Խոսրովի գործ: Բայց ոչ այլ ինչ էր

* Թուղթ առ Վահան 1873. եր 606.

այն, և թէ ոչ Պիտոյից զբքի մի հաւելք: * Այս գրութեան յառաջարանի մէջ Միտարանը յիշում է և մի ուրիշ հատուած «Խոսքով կայ թարգմանելի հայոց, Առ այնոսիկ, որ ասին ընտրեալին անձնու եւ անտեղիքն ընկալեալ զմարդկութիւն Աստուած քան ի կուսէն, զարձեալ նոյն հեղինակի զործ համարելով:

Սակայն Տ. Գիւտ Ազանեան, որ ունէր Խոսքովի թարգմանելի երկի ամբողջութիւնը ** և Հ. Բ. Սարգսեան Վենետիկի Միթարեաններէից ***, հերքեցին այս կարծիքը: Հ. Ազանեան Խոսքովին է. զարու հեղինակ էր համարում և ժամանակակից Նոր կաթողիկոսի իսկ Հ. Սարգսեան Ը. զարու: Ի վերջոյ Վիեննայի Միթարեաններէից Հ. Յ. Տաշեան մի գեղեցիկ յօդուածով ամփոփեց թեր և զէմ վիճարանութիւնները յայտնելով և իւր կարծիքը Խոսքովի ժամանակի մասին: Հ. Տաշեան ևս նորան Ը. զարու և Օձնեցու ժամանակակից անձն է համարում: Մենք յանձնարարում ենք այդ զրուածքը այն ընթերցողներին, որոնք ընդհանուր դադար ստանալ կկամենային Խոսքովի քննական գրականութեան և ձեռագիրներին մասին: **** Ի լրութիւն Հ. Տաշեանի յօդուածի աւելացնում ենք, որ Մայր Աթոռի Չեռագրատանը Խոսքովի երկու ձեռագիր ունինք № 518 Մ. ց. և № 56 Գ. ց. բացի այն պատճառից, որ № 655 (641) Մ. ց. ձեռագրից հրատարակել է Միտարանը: Մեր ուսումնասիրութիւնը կատարել ենք այդ երկու ձեռագիրներին վերայ: †

* Մովսիս Խորենացւոյ մատենագրութիւնք. Վենետիկ 1843. եր. 537.

** Տարաբաղդար չկարողացանք ձեռք բերել Հ. Ազանեանի յօդուածը, որ տպուած է Երևանի № 64, 1892, Բովանդակութիւնը մեզ յայտնի է Հ. Տաշեանի յօդուածից:

*** Խոսքովի թարգմանչին և Միտարանի բրած մի նոր գիւտի աթիւ. Բաղմալէտ. 1892. Մայիս:

**** Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք. — Ազգային մատենագրան ԺԶ. 1895. եր 49.

†. № 518 մի նոտագիր ձեռագիր է, թուականն անյայտ, բայց հնագրական տեսակէտից կարող է ժէ. — ԺԸ. զարում գրուած լինել: Ստացողն է ոմն Սահակ, որ երկար ժամանակ մաքառել է Հայոց եկեղեցու հակառակորդների գէմ: Նոտագիր է նոյնպէս № 58-ը, որ գրուած է 1850 թ. Տ. Առնիկանոս Տ. Ստեփանեանի ձեռքով, Վերաստանի և Տայոց գաղթականների կառավարիչ

Բ.

Ուսումնասիրութեան բուն զործին անցնելուց առաջ, անհրաժեշտ է մի քանի տեղեկութիւն տալ Խոսքովի երկի բովանդակութեան մասին: մտնուանդ որ տպագրուած չլինելու պատճառով անյայտ է բանասեր հասարակութեան: Խոսքովի թարգմանելի զլրբ հինգ մասից կամ զուիններից է բաղկացած հետեւեալ վերնագիրներով.

ա. Խոսքովի թարգմանելի Հայոց. Առ այնոսիկ, որ ասին ընտրեալին անձնու անտեղիքն ընկալեալ զմարդկութիւն Աստուած քան ի կուսէն:

բ. Յաղագս: Թէ պարտ է զմարմինն Տէրունական համագոյ ասել Աստուածն քանի, կամ մարմնոյն եւ քան ի մի ընտրեալ ասել, Թէ ոչ:

գ. Առ այնոսիկ, որ յերկուս զմարդկայնորն անջատեն ընտրեալն: այլ զոչ ասին յառաջ քան զյանցանսն եւ այլ զկնի յանցանաց:

դ. Առ այնոսիկ, որ տարակուսին ի վերայ փրկչական կրից մարդկայնոց, Թէ ընականն պարտ է ասել Թէ անքնական: Այս մասը մի թուղթ է ուղղուած Անտիոքի Աթանաս պատրիարքին:

ե. Նորուն Խոսքովի թուղթ առ Տէր Սարգիս եպիսկոպոս Գեղարկիւրայ:

Առաջին մասից, որ մի ամբողջութիւն է իւր համար, տեղեկանում ենք, Թէ մի ինչ որ ժողով է եղել գումարուած միութիւն հաստատելու նպատակով: Բայց ժողովը երկու կուսակցութեան է բաժանուած: Հեղինակն այս զրուածքն ուղղում է հակառակ կուսակցութեան պարագլխին, որ նոյն դերն է կատարում հեղինակի և իւրայինների վերաբերութեամբ, ինչ որ Յուդան Զրիստոսի և Նորա աշակերանների հաւար: Հակառակորդն ինքն է յորդորել միութեան նպատակով ժողով գումարել, խոստանալով «ցածուցանել ի ժողովոյ անտի զօտարախառութեան իւրոյ շերմութիւն եւ զանշաւիագիւտն ի բաց թո-

Վարպետ եպիսկոպոսի հրամանով, Երկու ձեռագիրների մէջ միմեանց հետեւում են ա) Անտիոքի պարագլխի Հայոց—Բան հակաճառութեան ընդդէմ երկարակաց բ) Խոսքովի բարգմանի երկերը և գ) Յովնանու Բաղմալի դաւանաբանական մի երկը—Յաղագս նշանակ հաւատոյ նիկեանն ՅԺԸ. իցն

ըսել նորածնութիւն կարգաց: կրօնից եւ պաշտամանց» նոյնպէս «յանձն առնոյր ընդ մեզ միաձայնել մի բնութիւն ըստ զեւրոպայ միաբնութեանն Աստուածն բանի մարմնացեալ» բայց ոչ միայն գրեւել է իւր խոստումը այլ և մեծ խառնութիւն է ձգել ժողովականների մէջ: Սա պայման էր գրել «ոչ մեզ զգաւմն Բազկեղոնի յիշել և ոչ իւր» ինչպէս և «զանուանեալն իւր մեծ եւ զորս ընդ նովաւ» ընդ մերոյ ի ձեռին կարգեալ խոստանայր իշխանութեամբ»: Սակայն միութեան փոխանակ կուսակցական պայքար է սկսուի՝ ժողովի մէջ: Հակառակ կուսակցութեան զուրկ իւր խոստման դէմ «զժողովոյն Բազկեղոնի յայտնէր զհամաձայնութիւն»: Հակառակորդը խորամանկութեամբ կամեցել է հեղինակին և նորայիններին «ի պարտութիւն տրեանել»: Ժողովրդի բազմութեան մէջ մեծ շփոթութիւն է ընկնում առանց գործի ելքին սպասելու: Գի զոմանս հոմախումութեան կարծիք բարկութեամբ զինեին տեսանելով զմեր առ նա խաղաղասիրելն իս՝ այլք զօրանալ Հակառակամարտին և իւրեանցն տկարանալ զլսոյ երկուցեալք և այսօրիկ մերա[յ]ոցն: Իսկ նորոյինները քաջալերուած էին յաղթութիւն սպասելով: Սակայն Աստուծոյ զօրութեամբ ընդհակառակն է պատահում: Թեր և դէմ եղած խօսակցութիւնից անգլիականում ենք, որ Հակառակորդը մի բարձր անձնաւորութիւն է և որոշ պահանջներ ունի ժողովից: «Տիեզերաց աչք յիս հային և ինձ ամօթ մեծ է ի մարանեղոցն քակիլ և ընդ անմարանից ինկի և դարձեալ զի գութ և զմի ոչինչ յիմոց անտի կատարեցէր ինկրոց»: * Ապա Մոսքովիկ բացատրում է այս խօսքերի իմաստը: «Զի յատաճ քան զայս տակը ձեռնադրութիւնըս տալ ու խախտման հանց և ի քսան և հինգն ղեկեմբերի ձեռնդ առնել և ղերեքսրեանն օրհնութիւնն ի վերայ Ներդրութեանն և ոչ ի վերայ Որդոյ միայն նուարեալ ի բաց հանելով տնդուստ ղխաշեցարն»: Այս խնդիրների վերաբերութեամբ վէճ է ծագում երկու-

սի մէջ: Հակառակորդը նեղն ընկնելով՝ զրա որ խոստովանութիւն է պահանջում Մոսքովիկից, որպէս ղի ինքն էլ զրա որ պատասխանէ: Պահանջ է Մոսքովիկի թուղթը * և հակառակորդի պատասխանը: **

Մոսքովիկ այս գրութեամբ կամենում է ջրել Հակառակորդի մոլորութիւնը և հաստատել Հայաստանեայց եկեղեցու ուղիղ փարդայնութիւնը: Բրիտտոսի մարդեղութեան մասին: Հակառակորդի վարդապետութեան վերլուծութիւնից Մոսքովիկ այն եզրակացութեանն է հասնում, որ նա Բրիտտոսի մարդեղութիւնը «ոչ միայն անձեւ այլ և անսկիզբն» և անդէմ ընդունում: Իմաստասիրական եղանակներով Մոսքովիկ պարզում է Հակառակորդի մոլորութեան հետեւնեղները և հաստատում թէ Բրիտտոս «ի մերմէս առանձնակի իւր միացոյց մարմին նոզում ըանականաւ» ապա ուրեմն ոչ ընտելիւն անդոյ եւ անդէմ զմարդկայինս ընկալեալ քանն Աստուծոյ:

«Արդ կամ աստացեա ըստ գրոց» որպէս զանունն նոյնպէս և զղէմն մարդկային ի Բրիտտոս» ինչպէս և Մոսքովիկ ինքն է ընդունում «կամ թէ ի բաց բարձցեա զգիմին ասելն ընդ նմին ի բաց բարձեալ լինիս և

* . . . Բայց արդ եթէ տացէ քեզ Աստուած ընթրհս բարեպաշտութեան և խնդրեա ճշմարտութեանն ինեւ ընդ մեզ խոստովանելից, աստացիս որպէս բնութիւն մարդկային առնուլ բանին ի կուսեան և որպէս զգէմ լանին և մարմնոյն իւրոյ ընդ ձեռն միաւորութեանն մի խոստովանելով դէմ պայպէս և զընտելիւնն զաստուածայինն և զմարդկայինն մի գաւանել բնութիւն յանձառ միաւորութեանն...

** Առ ի սրբութեանդ ձերմէ տուա ինձ զիր հարկաւորութեան պահանջել ի մէնջ ասել զմարդկային դէմ առնուլ բանին ի կուսեան և այս ինձ այլ ոչ ինչ երևի քան թէ ասել զոմն մարդ առնուլ զի ամենայն մարդ յորմէ հետէ ձեռնայ յարեալ յայնմ հետէ իմացեալ լինի դէմ քանդի այսպէս ոչ այլ ինչ գիտեմ զղէմն քան թէ զոմն մարդ: Արդ թեպէտ և Տեսան մերոյ Երեսօսի Բրիտտոսի ոչ ուրանամ մարդկայնոյն երևիլ մարդկան գիմաւ այլ քանդի փոխանակ սերման զբանն ասեմ ժամանել յարգանդ կուսին ըստ այնմ մտաց մի ասեմ զղէմն իսկ մի բնութիւն յետ շարադրութեանցն ոչ զոր ի հարցն գիտեմ խոստովանել: Զի թէ ոչ անսանկի զբոլոր ինդրեալն Հակառակ հարցն ամենայն ուրեք համարելի զոմն ձեզն ձայնակցութիւն այլ զի ամենայն տեսանեմ զձեզ փութացօս առանց հերձուածոյ ասեցման օտոր ժողովոցն:

* Մի ուրիշ տեղ Մոսքովիկ հետեւեալ խօսքերն է ուղղում Հակառակորդին. «և ոչ վայելէ իր փառս վեհագունի անուանդ»:

զանուանն առաստեղծիւնն: Խոսքովի խոստովանութեամբ «հասարակական և դէմ առանձնական և յատկական» նոյն ինքն եղև ըստ ժամանակի և մարդ հանգիստ բնութեամբ և դիմաւ և առանձնաւորութեամբ: Այլ ոչ եթէ յաղագս սորին այսորիկ յերկուս բաժանեալ բնութիւնս՝ զԲրիստոս և կամ երկուս ասել զնա դէմ և երկուս անձնաւորութիւնս: այլ մի բնութիւն մի դէմ և մի անձնաւորութիւն: Բայց նա «մի բնութիւն և մի դէմ ասելով ի Բրիստոս» զաւանում է տչ ըստ համազոյութեան բանին և մարմնոյն: * «այլ ըստ անձառ միաւորութեան» Ապա շարունակութեան մէջ թուում է մարդկութեան խորհրդի բազմաութեան սխալ ըմբռնումները ի միջի այլոց և «ըստ բնութեամբ միաւորութիւնն» եթէ արտաքոյ դիցէ զիմի և անձնաւորութեան ըստ այժմոցս հաւատարեացի նորագոյն բուսեալ անպարշտութեանս: Երկրորդ և երրորդ զլուսները կապ ունին միմեանց հետ: Խոսքովի այս երկու զլուսների մէջ մաքառում է այն մոլորութեան դէմ որի հակառակ զինուած էր և Յովհանն Օսնեցին Երեւութականաց ճառի մէջ: Խոսքովի այս երկու զլուսների ինչպէս և Օսնեցու Երեւութականաց ճառի մանրամասն քննութիւնը ցոյց է տալիս որ երկու հեղինակներն էլ մաքառում են Յուլիոս Աղիկառնացու հետեւողների դէմ:

Չորրորդ զլուսը ինչպէս յիշեցինք մի թուղթ է ուղղուած Անտիոքի Աթանաս պատրիարքին: Դիտել աստուածային ժողովրդեան հովիւ քրիստոսեան բանաւոր հօտի հայր մեծ ի մեծադուների աթոռն նստեալ առեցելոյն Պետրոսի Աստուածապատիւ Տէր Աթանաս պատրիարքի Անտիոքու մեծի: Խոսքովի նուստ ծառայից: Տէր իմ Տէր:

Այս հատուածն ևս ինչպէս առաջինը պատմական կարևոր նշանակութիւն ունեցող մի յիշատակարան է: Թղթի սկզբին կցուած է մի յառաջարան «նախադիր քանից առ Աթանաս Անտիոքացի» որից տեղեկանում ենք թէ գրուած է Աթանասի խնդրանքը: Այս թուղթն ևս կապ ունի մի ժողովի հետ որի պատճառն եղև է նոյն ինքն Աթանաս որովհետև նախադրութեան մէջ նա

կոչում է «հայր բազմաց ի միաբանութիւն եկեղոց առաքինասէր անձանց» իսկ թղթի վերջերում հեռեւալ տողերն է ուղղուած նորան: «Զի դու ժառանգ դարս ճշմարտութեամբ հարանց ուղղափառաց և նոյն խաղաղասիրութեանն եղբւր նախանձորդ» ըսկիցն արարել ի մարդիկ սերմանել զխաղաղութիւնս զոր տնկեաց հողին սուրբ ի մէջ հաւատացեալոց: Պատրիարքի հրամանով նորա եպիսկոպոսներից երկուսը Թէոդոտոս և Աթանաս պէտք է խօսէին Խոսքովի հետ «ի դերայի զորշտատ» «վասն հաւատոյ» Աթանաս եպիսկոպոսը վիճարանութեան ժամանակ լուռ է մնացել և առհասարակ Խոսքովի նորանից վատ բան չէ լսել: Բայց Թէոդոտոս ոչ միայն չի հարցնում Խոսքովին այլ միանգամայն պարզ յայտնում է իւր մտածած մոլորութիւնը: Խոսքովի այդ պարզութիւնը շնորհակալութեան արժանի է համարում «զի թշնամութիւն յայտնեալ զգուշանալ հրամայէ իսկ ընդ կեղծաւորութեամբ մտանել յանգեալս զաւանանէ» Բայց տարաբաղաբար այդպէս պարզ իւր մոլորութիւնը չէր յայտնել ժողովի ժամանակ, ապա թէ ոչ «երկոքին կողմանքս ի չարէ նորա աստուած զերծեալ լինէաք» ոչ նա նենգաւոր և ոչ մեք նենգեալ գտանէաք: Ընդհակառակ ժողովի մէջ լուռութեամբ ամեն ինչ «ծածկեաց» և որպէս կարթիւ բերանովք այլոցն զմեզ ոչստ կամեցաւ: Դերայի դրոշմատի խօսակցութիւնը կատարուել է ժողովից յետոյ այնտեղ է եղև նոյնպէս Աթանաս պատրիարքը բայց ոչ մասնակից վիճարանութեան ինչպէս տեսանք մէջ բերած տեղեկութիւններից: «Զի թէ Թարգմանն առ ժաման ոչ էր գնացել անդրէն ի տեղոջն իսկ կամէն ընդ քեզ խօսիլ յանդիման նորա» զրում է Խոսքովի: Այս թղթով Խոսքովի մաքառում է Թէոդոտոսի մոլորութեան դէմ և կամենում է Աթանաս պատրիարքին հասկացնել «թէ ընդ քո սուրբ աթոռովք և քոյին ուղղափառութեանն զաւազանաւ գտանի թաղուցեալ դայլ գառն կերպարանեալ»:

* Այս վարդապետութեան դէմ նա մաքառում է Բ. և Գ. զլուսներում:

Դոստոյովիկ մէջ առ մէջ բերում է Թէո-
գոտոսի խօսքերը և հերքում Այդ վկայու-
թիւններից պարզ երևում է, որ Թէոգո-
տոս Սեկրոս Անտիքացու վարդապետու-
թեան հետեող է կամ ուրիշ խօսքով Յա-
կովիկ Ասորի է: Բրիստոսի մէջ կատարելու-
թեան երեք աստիճանաւորութիւն էր ըն-
դունում Թէոգոտոս. նորա ասելով «անկա-
տար և անփառաւոր և ապականացու եկաց
մնաց մարմինն Բրիստոսի ի Տննդէնէն մինչև
ցյարութիւնն»: Իսկ «յետ յարութեան շնոր-
հէր գտանել նմա փառս զկատարելութիւնն
և զանապականութիւնն»: Դոստոյովիկ նորա
խօսքերի մէջ հակասութիւններ է գտնում.
Ասէր յարգանդի կուսին միաւորեալ գրանն
Աստուած ընդ իւրում մարմնոյն յաղաքս
որոյ և բնութիւն մի զԲրիստոս ասէր զոյ.
բայց յետոյ բաժանում էր «զոմն ամենակա-
տար և փառաւորեալ և անապական ասելով
և զմիւսն ոչ նոյնպէս»: Իսկ նորա վերջին
մոլորութիւնն այն էր, որ ասում էր, «թէ
զմարմինն իւր բանն Աստուած ատրեալ զնէ
առաջի Հօր և Հոգւոյն զկնի թաղմանն իրրե
զրեռն ինչ օտարոտի և աշխատաբարձ, ասե-
լով. Նս վասն զի մէկին և ոչ կարացի զմար-
մինս իմ ընդիս միաւորել և իմումս հաղորդ
առնել փառաց և զօրութեանս պահեցի զայս
ձեզ առնել զի կրկին էք: Դոստոյովիկ մի առ
մի ջրում է այս մոլորութիւնները և ս. Հայ-
րերի վկայութիւններով հաստատում իւր
խօսքը: Թղթի վերջում գառնում է կրկին
Աթանաս պատրիարքին «բայց դու ով Հայր
պատուական, հիմն և հաստատութիւն ե-
կեղեցւոյ, մի բացցես զլսելիս քո այգաղի-
սեաց մոլար վարդապետութեանց բանի,
որովհետեւ դու ժառանգ եղար սուրբ հարց
ուղղափառութեան և խաղաղասիրութեան
նախանձաւոր: «Եւ մի զարմանար» շարու-
նակում և Դոստոյովիկ իւր խօսքը, «թէ ընդ
քո սուրբ աթոռովդ և քոյին ուղղափառու-
թեանն դաւադանաւդ գտանի թաղուցեալ զայլ
գառն կերպարանեալ»: Այս ակնարկը վերա-
բերում է Թէոգոտոս եպիսկոպոսին: Սա-
կայն պարտ և արժան է յայտնել և ցուցա-
նել, զլուիս բոլոր անղամիցս քեւ համոզե-
րաւորութեան է և մինն միայն ի մէջ էր

անդամ, որ վիրաւորեալ գտաւ: Ապա յոր-
դորում է նորան. «մի լիցի քեզ թիւրեցեւոյն
լինիլ թիւրակից, որ սկսարդ լինել խնդրող
ուղղութեան և բարեպաշտութեան»: Թուղ-
թը վերջացնում է խնդրելով, որ եթէ
պատրիարքը չկամենայ «հասանող բանիւ կտրել
և ի բաց ընկնելու զնա, զորմէ բանքս են և
կամ որ ըստ նմա իցենն» զոնէ եկեղեցու
աւանդութեան և սինհոդոսական կարգի և
սովորութեան համաձայն պէտք է արձանա-
դրել ընդունելութեան և ոչ ընդունելութեան
մասին:

Հինգերորդ զուտը ինչպէս տեսանք վեր-
նագրից և ինչպէս երևում է սկզբնաւորու-
թիւնից, ուղղուած է Գերազիկորայ Սարգիս
եպիսկոպոսին. «Պատուական զլուիս հովիւ
հօտասէր, բարեպաշտութեան փափագող,
մերձեալ ի դուրս ուղղափառութեան, Տէր
Սարգիս եպիսկոպոս Գերազիկորայ, Դոստով
յանարժան ծառայից խնդրէ խաղաղութիւն
քեզ յԱստուծոյ: Այս խօսքերը մի և նոյն
ժամանակ ապացոյց են, որ Սարգիս եպիս-
կոպոսն էլ կապ ունի միութեան նպատակով
գումարուած ժողովի հետ, որի մասին յի-
շատակութիւն կար Ա. և Դ. զլուիսների մէջ:
Դոստովիկ «ի հեռաւորաց և յանձանօթից»
մօտեցել է Սարգիս եպիսկոպոսին և նորա-
յիններին հասկացնելու նրանց օգուտը, ինչ-
պէս Յովսէփ Բանանացոց երկրից Եգիպտոս
էր փոխադրուած փարաւոնին և նորա երկ-
րին կերակրիչ հանդիսանալու: Դոստովիկ յոյս
ունի, որ Սարգիս նմանող չի լինիլ «այնոցիկ, որ
զանձնահաճութեան ախորժեցին ստանալ զա-
նուն» կամ որոնք «զբարեբանիչս իւրեանց ձգեն
ի վեր և ի բարձրագոյն տեղի բարեկամու-
թեան, իսկ զյանդիմանիչն ի դրունս ատեն
ատելութիւն կատարեալ»: այլ որպէս մարդ,
«որոյ ծաղկեալ են ալիք» և «զերկիւղածու-
թեան զգեցեալ ձեւ և անուամբ վարդապե-
տութեամբ պայծառացեալ» ճշմարտութեան
հետեող կլինի:

Այս ընդհանուր յառաջարանից յետոյ
Դոստովիկ նկարագրում է Սեկրոս Անտիքա-
ցու և Յովիս Աղիկարնացու հանդէս զարը
Յոսափանոս կոչելու ժամանակ, նոյա փա-
խուսար Եգիպտոս, նոյա թշնամանալը տար-

բեր վարդապետութիւններէ համար և երկու հերձուածներէ յեղապետ հրատարակուիլը: Աղիւստեանցու հետեւողները կոչուած են Յուլիանիստներ, իսկ Սեկերոսինը Յակոբիկներ: այն եպիսկոպոսի անունով որ ձեռնադրուելով Սեկերոսից՝ շրջեց Ասորոց երկրում և ամեն տեղ լցրեց սարկաւազներով և քահանաներով, որոնք նորա անունով Յակոբիկի պէտք է կոչուէին՝ խոստովանելով Սեկերոսի հաւատը: Մեր եկեղեցու պատմութեան համար կարեւոր է մանաւանդ հետեւեալը, որ ամբողջապէս մէջ եղբ բերում. «Զոր ապա յետ այսորիկ փափաղեցին երկրքին կողմանքն անուամբ մեծին Գրիգոր Խոստովանողին Բրիտանոսի խառնեալ զսուրբ անուն ընդ անուանա աղանդահարցն իւրեանց, քաղցրութեան մեղու ռձանելով զսպանող զեղս և զաղտեղի գոյն դունեալ և պաճուճեալ գունով սպիտակութեան: Եւ համայն ոչ հաւատարապէս որպէս անուանն ցանկացողք հրաշալւոյն Գրիգորի ընդ նմին և խոստովանութեան, այլ ըստ օրինակի Շամրտացւոցն երկիրպաղանէին սատուածոցն իւրեանց և պաշտէին զԱստուածն Խարայելի: Պատմական ուրիշ ցուցմունքներէց ևս տեղեկութիւն ունինք Ասորիկների հոյսոց եկեղեցու հետ կապած միութեան մասին. Բարդէնի, Նեքսէս Աշտարակեցու: Առիթասի թղթերը նոյն իսկ յետին հեղինակներ Միքայէլ Ասորին և Պողոս Տարմնեցին հաստատում են այս իրողութիւնը: Վերջին հեղինակի ասելով Ասորիների մի մասը Լուսաուրջի անունով Գրիգորիկ էին կոչում: Բայց և այնպէս այն ձեռով ինչպէս մեզ Խոսրովիկն է, աւանդում պատմական մի նորութիւն է, որ մեք առաջին անգամ՝ ենք լսում: Այս խնդրի լուսարանութիւնը յետոյ կտեսնենք:

Խոսրովիկ մտքառում է թէ, Սեկերոսի և թէ, Յուլիոսի դէմ յոյց տալով Բրիտանոսի մարդեղութեան ճշմարիտ գաւանդութիւնը նախնի հարց գրութեանց համաձայն: Երկուսի տարբերութիւնը և վարդապետութիւնը ալի պարզ այսպէս է որոշում՝ Խոսրովիկ. «Յուլիանէ տակը պարտ է զմարմինն Բրիտանոսի անշարժարելի տակ և անմահականացու ի ծննդէնէն որ ի կուսն մինչև ցյալիտեան քանդի չարչարելի և մահականացու տակը զտանի ասացեալ ապականացու, ընդ ձեռն որոյ հարկաւոր է, ապա և երկուս բնութիւնըս տակը իսկ Սեկերոսիանոս տակը: Ոչ այլ պարտ է չարչարելի և մահականացու տակ զմարմինն Բրիտանոսի ի ծննդէնէն մինչև ցյալութիւնն զի այսօրիկ և զկնի յարութեանն

հետեւալ ինին մարմնոյն Բրիտանոսի զի թէ անշարժարելի և անմահականացու մարմնն ունէր մինչև ցյալութիւնն, գտանի եղեալ սուտ մարդեղութիւն նորա և զմարդկայինն կատարել առ աշօք և ոչ ճշմարտութեամբ»:

Երկու աղանդապետի մոլորութիւնը ընդհանուր կերպով ցոյց տալուց յետոյ՝ խիստ խօսքերով դիմում է Խոսրովիկ նրանց հետեւողներին, մանաւանդ Յուլիանիստներին: «Եւ արդ՝ զի ցուցաք վասն երկուցս այս արանց զի ոչ միայն եթէ ոչ են համաձայնք սրբոյն Գրիգորի այսինքն առաքելական հաւատոյն, այլ և յոյժ նոցին հակառակք: Ժամ է այսուհետեւ ասել մեզ առ սոսա, զորմէ տակն Նզիրս ցլորայէլ, Մինչև յերր կապաք յերկուս ոտս և կամ մինչև յերր ինդրէք ծածկել ստութեամբ զճշմարտութիւնն և ընդ ճշմարտութեամբ լծագուցանել զստութիւնն, այսինքն կամ պէտք է հետեւի պարզութեամբ Սեկերոսին և Յուլիոսին, կամ հետանալ խաղառ նորանցից: «Ահաւասիկ վկայ ունիմ զԱստուած վկայական լուսնիւ: Թէ տակաին ևս խաղառ սիրէք զատելիսն և զթշնամիսն Աստուծոյ (Սեկերոսին և Յուլիոսին) համարէք ձեզ առաջնորդս, զատելոց է զձեզ բանս իմ այս յաւուրն դատաստանի. և ոչ կարէք պատճառել իրր թէ ոչ որ զայս մեզ զգացոյց և բողբեաց յականջս մեր, քանզի ոչ այլ ինչ, այլ ի վկայութիւն ձեզ առաքեալ զիս Տէր»:

Թղթի մնացած մասը հակաճառութիւն է Աղիւստեանցու դէմ, որովհետեւ ընդարձակ կերպով խօսել է արդէն Սեկերոսի համար առ Աթանաս պատրիարկ զրաժ թղթում, ինչպէս յիշում է երկու անգամ*:

Այս մասն էլ մեծ նմանութիւններ ունի թէ, Օմնեցու Երեւութականաց ճառի և թէ, Բ. և Գ. զուլաների հետ, որ ինչպէս տեսանք Յուլիանիստների դէմ էր ուղղուած:

Գ. Վ. Յովսէփեան.

(Կր. շարունակաւ)



* «Զոր և յիշեցաք սակաւութիւնը զրազմագան նորա (Սեկերոսի) հայհոյականն ի թղթին, որ առ պատրիարկոյն Աթանաս վասն Թէոդոտեայ: Մի ուրիշ տեղ. «Զև զոր ասելն պարտ էր ընդդէմ ժառանգութեանցն Սեկերոսի, ասացաք սակաւութիւն թղթին, որ առ պատրիարկոյն Աթանաս գրեցաք վասն Թէոդոտեայ»: